

<p style="text-align: center;">Հավելված 11 Գործարար Հիմնական Դրույթների</p>	<p style="text-align: center;">Appendix 11 To the General Terms of Business</p>
<p style="text-align: center;">Հատուկ հանձնարարությունների կատարման պայմաններ</p>	<p style="text-align: center;">Terms of Special-Order Execution</p>
<p>1. Ընդհանուր դրույթներ</p>	<p>1. General provisions</p>
<p>1.1 Սույն հատուկ հանձնարարությունների կատարման պայմանները (այսուհետ՝ Հատուկ պայմաններ) հանդիսանում են Գործարար հիմնական դրույթների (այսուհետ՝ Դրույթներ) հավելված 11-ը և ցույց են տալիս այն հատուկ/լրացուցիչ պայմանները, որոնց հիման վրա «Ֆրիդոմ Ֆինանս Արմենիա» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) մատուցում է Դրույթներով նախատեսված ծառայությունները այն հանձնարարությունների և լիազորությունների հիման վրա, որոնք նկարագրված են սույն հավելվածի 2-րդ կետում (այսուհետ միասին՝ Հատուկ հանձնարարություն).</p>	<p>1.1 These Terms of Special Order Execution (hereinafter referred to as the Special Terms) form Annex 11 to the General terms of Business (hereinafter referred to as the Terms) and determine the special/supplementary terms under which Freedom Finance Armenia LLC (hereinafter referred to as the Company) provides the services stipulated by the Terms on the basis of the orders and authorities designated in Section 2 below (hereinafter collectively referred to as the Special Order).</p>
<p>1.2 Հատուկ պայմանները վերաբերում են բացառապես այն Հաճախորդներին, որոնք բավարարում են հետևյալ պահանջները միաժամանակ (այսուհետ՝ յուրաքանչյուրն առանձին՝ Հաճախորդ).</p>	<p>1.2 The Special Terms apply only to those clients who meet all of the following criteria (hereinafter individually referred to as the Client):</p>
<p>1.2.1 Հաճախորդը ստորագրել է Ընկերության կայքում տեղադրված Դրույթներին միանալու հայտը և Ընկերության հետ մտել գործարար հարաբերության մեջ,</p>	<p>1.2.1 The Client signed the application to join the Terms posted on the website of the Company and entered into Business relationship with the Company,</p>
<p>1.2.2 Հաճախորդի և Ներկայացուցչի միջև (ինչպես տերմինը սահմանված է 2.1 կետում) կնքվել և ուժի մեջ է մտել ներդրումային խորհրդատվության պայմանագիր (այսուհետ՝ ՆԽ պայմանագիր).</p>	<p>1.2.2 The Client and the Representative (as defined in Clause 2.1) entered into an investment advisory agreement (hereinafter referred to as the IA Agreement), and such IA Agreement is in effect;</p>
<p>1.3 Ընկերությունը, հավաստիանալով 1.2 կետում նշված պահանջների առկայության մեջ, Հաճախորդի համար Ընկերությունում հաշիվ բացելիս սահմանում է Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող սակագներից «խորհրդատվական միջազգային» սակագինը՝ ինչպես սահմանված է Հավելված 3-ում:</p>	<p>1.3 The Company, making sure of the existence of the requirements mentioned in point 1.2, when opening an account with the Company for the Client, sets the "Consultative International" tariff from the tariffs charged for the services provided by the Company, as defined in Appendix 3.</p>

<p>1.4 Ընկերությունում Հաճախորդի հաշվի բացման պահից սկսած Ընկերության և Հաճախորդի միջև գործարար հարաբերությունները կարգավորվում են Դրույթներով, սույն Հատուկ պայմաններով և այլ հավելվածներով:</p>	<p>1.4 From the moment of opening the Client's account with the Company, the business relationship between the Company and the Client are governed by the Terms, these Special Terms and other annexes.</p>
<p>2. Հատուկ հանձնարարություն</p>	<p>2. Special Order</p>
<p>2.1 Նս պայմանագրի դրույթները կատարելու նպատակով Հաճախորդի անունից հանդես է գալիս լիազոր ներկայացուցիչը. Ռուսաստանի Դաշնության օրենսդրության հիման վրա ստեղծված «Ֆրիդոմ Ֆինանս» սահմանափակ պատասխանատվությամբ ներդրումային ընկերություն, պետական գրանցման համար՝ 1107746963785 (այսուհետ՝ ներկայացուցիչ)</p>	<p>2.1 For the purposes of performance of the IA Agreement, the Client hereby appoints Freedom Finance Investment Company Limited Liability Company established under the laws of the Russian Federation, Primary National Registration Number 1107746963785, (hereinafter referred to as the Representative) to be his/her/its authorized representative.</p>
<p>2.2 Հաճախորդը հանձնարարում է Ընկերությանը և ներկայացուցչին, ինչպես նաև տրամադրում է համապատասխան լիազորություններ, միմյանց միջև Հաճախորդի ցանկացած անձնական տվյալների փոխանակության համար, ներառյալ՝ Նս պայմանագրի և Դրույթների շրջանակներում առկա տեղեկատվության, այն հաշիվների վերաբերյալ տեղեկատվության, որոնք բացված են Հաճախորդի անունից Ընկերությունում և ներկայացուցչի մոտ, ինչպես նաև տվյալ հաշիվներով գործառնությունների վերաբերյալ:</p>	<p>2.2 The Client instructs and authorizes the Company and the Representative to exchange any personal data of the Client held by the Company and the Representative, including the exchange of information under the IA Agreement and the Terms, in respect of all accounts opened with the Company and the Representative, as well as all Transactions on such accounts.</p>
<p>2.3 Հաճախորդը հանձնարարում է Ընկերությանը իրականացնել դրամական միջոցների փոխարկումը և դրանց դուրսբերումը հետևյալ պայմաններով.</p>	<p>2.3 The Client instructs the Company to convert funds and withdraw them on the following terms:</p>
<p>2.3.1 Հանձնարարությունը մշտական է (ենթակա է պարբերական կատարման մինչև դրա ուժը կորցնելը) եւ պայմանական է (ենթակա է կատարման ամեն անգամ, երբ հանձնարարությունում առկա են պայմանները).</p>	<p>2.3.1 The Order is permanent (subject to multiple execution until its expiration) and conditional (subject to execution every time when the conditions designated therein are met);</p>
<p>2.3.2 Հանձնարարության կատարման պայմանը Դրույթների ներքո Հաճախորդի յուրաքանչյուր հաշվի յուրաքանչյուր գործառնության կատարման փաստն է, եթե գործառնությունների կատարման օրը գործում է Նս պայմանագիրը:</p>	<p>2.3.2 The condition for the execution of the Order is the fact that each Transaction is made on each Client's account under the Terms, provided that the IA Agreement is valid as of the Transaction date.</p>

<p>2.3.3 Յուրաքանչյուր գործարքի ավարտից հետո Հաճախորդը հանձնարարում է Ընկերությանը.</p>	<p>2.3.3 Upon completion of each Transaction, the Client instructs the Company to:</p>
<p>ա) գործարքի օրը յուրաքանչյուր գործարքի 0.12%-ի չափով դրամական միջոցները (այսուհետև՝ նշված գումար) պահել Հաճախորդի առևտրային հաշվին:</p>	<p>(a) on the Transaction day, reserve the funds (hereinafter referred to as the Withdrawal Amount) in the amount of 0.12% of each Transaction on the Client's trading account;</p>
<p>բ) գործարքի օրը նշված գումարը փոխանցել Հաճախորդի առևտրային հաշվից Ընկերությունում բացված ոչ առևտրային հաշիվ (որը համապատասխանում է այն առևտրային հաշվին, որով կատարվել է գործառնությունը):</p>	<p>(b) on the Transaction day, accrue the Withdrawal Amount on a separate non-trading account of the Client (corresponding to the trading account on which the Transaction was made), and record the debiting of the Withdrawal Amount from the Client's trading account (on which the Transaction was made) and crediting it to the specified non-trading account;</p>
<p>գ) եթե նշված գումարի արժույթը տարբերվում է ՌԴ ռուբլուց, ապա գործառնության կատարման ամսվա վերջին օրացուցային օրը, իրականացնել նշված գումարի ՌԴ ռուբլով փոխարկումը՝ փոխարկման պահին Ընկերությանը հասանելի փոխարժեքով.</p>	<p>(c) on the last calendar day of the month in which the Transaction was made, convert the Withdrawal Amount into Russian rubles at the exchange rate available to the Company at the time of the conversion, if the currency of the Withdrawal Amount differs from Russian rubles;</p>
<p>դ) գործառնության իրականացման ամսվա վերջին օրացուցային օրը իրականացնել նշված գումարի փոխանցումը (փոխարկված ՌԴ ռուբլով) Հաճախորդի ոչ առևտրային հաշվից Ընկերությունում Ներկայացուցչի անունով բացված հաշիվ № XXX, փոխանցման նպատակի դաշտում նշելով՝ «DDMMYY թվականին կնքված № ABC Ներդրումային խորհրդատվության պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար վճարում № XYZ հաշվից», որտեղ՝ ABC-ն և DDMMYY-ն ՆԽ պայմանագրի համարը և կնքման ամսաթիվն են, որոնց մասին տվյալները Ընկերությունը ստացել է Ներկայացուցչից, իսկ XYZ-ը՝ Հաճախորդի՝ Ընկերությունում բացված հաշվի համարը:</p>	<p>(d) on the last calendar day of the month in which the Transaction was made, withdraw the Withdrawal Amount (the Withdrawal Amount converted into Russian rubles) from the specified non-trading account of the Client to account No. XXX opened by the Company to the Representative, indicating the following purpose of payment: “payment for services under the Investment Advisory Agreement No. ABC dated DDMMYY from account No. XYZ”, where ABC and DDMMYY are the number and date of the IA Agreement, the information on which the Company received from the Representative, and XYZ is the Client's account number with the Company;</p>
<p>ե) որոշել (ա)-(դ) կետերից տարբերվող այլ գործառնությունների իրականացումը՝ Դրույթներին համապատասխան</p>	<p>(e) determine other terms and conditions for transactions in (a)-(d) in accordance with the Terms.</p>
<p>3. Եզրափակիչ դրույթներ</p>	<p>3. Final Provisions</p>

<p>3.1 Հաճախորդը անձամբ է կրում Ընկերության կողմից հատուկ հանձնարարության կատարման հիմնավորվածության և հետևանքների համար, ինչպես նաև Հատուկ հանձնարարության պայմանների՝ Հաճախորդի շահերին համապատասխանության և Հաճախորդի և/կամ ներկայացուցչի կարգավորման համար:</p>	<p>3.1 The Client is solely liable for the validity and consequences of the execution of the Special Order by the Company, including for the compliance of the terms of the Special Order with the Client's interests and the regulation applicable to the Client and/or the Representative.</p>
<p>3.2 Հաճախորդը իրավունք ունի ցանկացած պահի եւ իր հայեցողությամբ միակողմանիորեն դադարեցնել հատուկ հանձնարարությունը՝ Նս պայմանագիրը դադարեցնելու կամ Դրույթներից հրաժարվելու միջոցով, ինչպես նաև միակողմանիորեն հրաժարվել սույն հավելվածից՝ մնալով Ընկերության հետ գործարար հարաբերության մեջ՝ Դրույթների հիման վրա: Սույն հավելվածից հրաժարվելու մասին Հաճախորդը Ընկերությանը ծանուցում է առնվազն 10 աշխատանքային օր առաջ:</p>	<p>3.2 The Client may at any time and at his/her/its own discretion revoke (terminate) the Special Order by terminating the IA Agreement and/or the Terms, also Client may terminate unilaterally the Special Order remaining in a business relationship with the Company based on the Terms. The Client shall notify the Company at least 10 business days in advance of the withdrawal from this appendix</p>
<p>3.3 Հատուկ հանձնարարությունը դադարեցվում է Դրույթների և/կամ Նս պայմանագրի դադարեցման օրը (կամ այն օրը, երբ Ընկերությանը հայտնի է դարձել Նս պայմանագրի դադարեցման մասին), կախված նրանից՝ թե որն է ավելի շուտ հայտնի դարձել Ընկերությանը:</p>	<p>3.3 The Special Order terminates on the date of termination of the Terms and/or the IA Agreement (or on the date on which information about the termination of the IA Agreement became available to the Company), whichever occurs first.</p>
<p>3.4 Ընկերությունն իրավունք ունի իր հայեցողությամբ լրացումներ կատարել կամ միակողմանիորեն փոփոխել Հատուկ պայմանները՝ պայմանավորված Դրույթներով:</p>	<p>3.4 The Company shall be entitled to unilaterally at its discretion amend the Special Terms in the manner stipulated by the Terms.</p>
<p>3.5 Հատուկ պայմաններում հստակ սահմանված ծառայությունների մատուցման բոլոր այլ պայմանները որոշվում են Դրույթներով: Հատուկ պայմանների և Դրույթների միջև հակասությունների առկայության դեպքում (ներառյալ՝ հաշվի առնելով նաև Դրույթների լրացումները), Հաճախորդի և Ընկերության հարաբերությունների նկատմամբ կիրառվում են հատուկ պայմանները:</p>	<p>3.5 All other terms and conditions of Company's services, which are not explicitly determined in the Special Terms, shall be established by the Terms. In case of discrepancies between the Special Terms and the Terms (including any amendments to the Terms), the relations between the Client and the Company shall be regulated by the Special Terms.</p>
<p>3.6 Սույն հավելվածը ուժի մեջ է մտնում Ընկերության գործադիր տնօրենի հաստատումից հետո՝ Ընկերության վեբկայքում հրապարակման պահին:</p>	<p>3.6 This appendix shall come into force upon approval by the Company's Executive Director upon publication on the Company's website.</p>